

ՀԵՆՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԴԱԼԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հայ մեդալային արվեստի պատմությունը ընդգրկում է շուրջ երեք ու կես հարյուրամյա ժամանակաշրջան: Սակայն հայ ժողովրդի պատմության ընթացքը անցավ այնպիսի ուղիներով, որ Մայր Հայաստանում, մինչև սովետական կարգերի հաստատումը, այդ արվեստը չունեցավ պայմաններ զարգացման համար: Ահա թե ինչու հայ մեդալային արվեստի սկզբնավորման և հետագա ձևավորման ակունքները մենք գտնում ենք օտար ափերում՝ հայկական գաղթօջախներում: Այդ պատճառով սփյուռքում ստեղծված հայկական մեդալները կրում են զանազան երկրներում թողարկված տեղի մեդալային արվեստի անխուսափելի ազդեցությունը՝ պահպանելով ազգային ոճն ու պատկերաստիպը, իսկ երբեմն՝ լրիվ կորցրելով սեփական ոգին: Հաճախ հայերը դիմում էին օտար վարպետներին՝ պատվիրելով մեդալներ, կամ հայ վարպետները ստեղծում էին մեդալներ՝ տեղացիների համար: Այսպիսով, բացի ազգային հայկական մեդալներից, կազմվեց մեդալային արվեստի մի ստվար խումբ, որը սերտորեն առնչվում է հայերի կամ Հայաստան երկրի հետ: Վերջին տասնամյակում ինչպես Սովետական Հայաստանում, այնպես էլ տարբեր երկրների հայաշատ վայրերում ծնունդ առան բազմաթիվ մեդալներ, որոնք, թողարկվելով մեծ քանակությամբ, լայն տարածում գտան՝ հավերժացնելով հայ ժողովրդի արժանի զավակների չմարող հիշատակը կամ մեր պատմության անօրինակ սխրանքների աղանձին էջերը: Մեդալային արվեստի հա-

մար բնորոշ է նաև նրա մասնավոր բնույթը, երբ մեդալով նշանավորվում են կյանքի հիշարժան առիթները, ինչպիսիք են հարսանյաց հանդեսը, ծնունդը և այլն: Վերջին խումբը խիստ բնորոշ լինելով հայ մեդալային արվեստի համար, բավականին դժվարացնում է նրա հավաքման և ուսումնասիրման գործը: Անհերքելի իրողություն է, որ յուրաքանչյուր նոր օրինակի հայտնաբերումը հաճախ եզակի նորություն է գիտության համար:

Հայ մեդալային արվեստի առաջին օրինակները ստեղծվում են Վենետիկի և Ամստերդամի հայկական գաղթօջախներում, անմիջականորեն առնչվելով Նոր Զուղայի առևտրականների հետ: Պարսկաստանի մեծահարուստ խոջայական տների մեծաշնորհն էր 17—18-րդ դարերում պարսկական մետաքսի վաճառահանությունը: Նրանց միջոցով ամբողջ Եվրոպան ողողվում էր պարսկական մետաքսով, այդ թվում Վենետիկն ու Ամստերդամը: Այնպես որ Նոր Զուղայի առևտրական տների ներկայացուցիչների անվան հետ կապված մեդալների ակալությունը Եվրոպայում պատահական երևույթ չէր:

Այս մեդալները բաժանվում են երկու խմբի՝ ամուսնական և բարոյա-խրատական, երկու խումբն էլ կրելով մասնավոր բնույթ, միաժամանակ տարբերվում են իրենց թեմատիկայով, պատկերաստիպով և այլ մանրամասնություններով:

Ամուսնական մեդալների վաղագույն օրինակները պատրաստել է հոլանդացի անվա-



նի նկարիչ Մարտին Հոլցհեյն (1697—1764): Այս հազվագյուտ մեդալի ոսկյա օրինակը պահվում է Լենինգրադի Էրմիտաժում, որը մինչ այդ համարվում էր եզակի: Վերջերս, Վենետիկի Միխիթարյան միաբանության թանգարանի ժողովածուում մեզ հաջողվեց հայտնաբերել նաև այս մեդալի նույնատիպ պղնձյա օրինակը:

Համեմատաբար մեծ թվով հայատառ ամուսնական մեդալներ մեզ են հասել Մարտին Հոլցհեյնի որդի՝ նույնպես մեդալագործ Իոհան Գեորգ Հոլցհեյնի (1729—1808) ձեռքով պատրաստված: Այդ մասին վկայում են նրանց վրա դրվագված իր անվան սկզբնատառերը:

Պահպանված մեդալները ընդհանրապես և որոշ օրինակների վրա փորագրված պատվիրատուների անուններից կարելի է եզրակացնել, որ նրանք պատրաստվել են ոչ անհատական եզակի նմուշներով, այլ նույնատիպ և մեծ քանակությամբ վաճառքի համար: Պահպանվել են նաև անստորագիր օրինակներ, որոնք կարող են հետագա ուսումնասիրության: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում քարոյա-խրատական մեդալները: Այս օրինակների պատկերատիպերը գրեթե նույնատիպ են, սակայն գրությունները տրված են ըստ պատվիրատուի խնդրանքի: Մեդալների խորհրդանշական պատկերները և համատոտ ու դիպուկ գրությունները պետք է որ ստացողին ներշնչեին ազնիվ զգացումներ: Առաջին կողմի պատկերները խորհրդանշում են Աշխատությունը և Վարձատրությունը, իրենց բնորոշ հատկանիշներով: «Խոհեմություն եւ սուսքինություն յաղթեւ ամենայնի»: «Մարտը հաւատ, հաստատուն յոյս, կատարեալ սէր»: Ահա այն նշանաբանները, որոնք որպես պատգամ, դրոշմված մետաղի վրա, հանձնվում էին կյանք մտնող երիտասարդին:

19-րդ դարում հայ մեդալային արվեստը նույնպես զարգանում էր գաղթօջախներում: Մեծ քանակությամբ մեդալներ ստեղծվեցին Ռուսաստանում, որոնք սերտորեն առնչվում են Հայաստանի կամ հայերի անվան հետ: Պետք է նշել, որ մեդալների այս խումբը, ի տարբերություն մյուս երկրներում ստեղծված օրինակների, ոչ թե կրում է մասնավոր բնույթ, այլ պատկանում է, շատ քիչ բացառությամբ, պաշտոնական թողարկումների շարքին: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առիթ հանդիսացավ մի շարք

մեդալների երևան գալուն: Երկու մեդալներ նվիրվեցին Երևանի գրավմանը:

Ռուս անվանի քանդակագործ և մեդալագործ Ֆ. Տոլստոյի 1826—28 թթ. ռուս-պարսկական և 1828—29 թթ. ռուս-թուրքական պատերազմներին նվիրված մեդալներից վեցը առնչվում են Հայաստանի հետ:

Սոսկվայի արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի պատվերով ստեղծվել են երեք մեդալներ, լավ սովորող աշակերտներին պարգևատրելու համար: Մեդալներ ուներ պարգևատրելու համար նաև Էրզրումի Սանասարյան վարժարանը:

Մեդալային արվեստի հետաքրքրական նմուշներ, կապված Լեհաստանի հայ գաղության հետ, պահպանվել են 19-րդ դարի երկրորդ կեսից: Նրանցից վաղագույնը նվիրված է ծագումով հայ Իզմաիլ Լուկաշևիչի (1822—1882) 25-ամյա գործունեությանը: Սյուր Հայաստանում համարյա մոռացության է տրված մեր հայրենակցի անունը: Նա համարվում է «Նավթարդյունաբերության առաջնեկը Եվրոպայում»: Մեդալի առաջին կողմի վրա պատկերված է Ի. Լուկաշևիչի դիմաքանդակը մինչև գոտկատեղին, դեմքով՝ աջ: Ծուրջը գրություն կա լեհերեն լեզվով. «Իզմաիլ Լուկաշևիչ. 1878»: Երկրորդ երեսի վրա լեհերեն գրություն՝ «Նավթարտադրության սիմվոլիզմ, արտադրության 25-ամյակին. 1878»:

Ծուրջ մեկ հարյուրամյակ մեդալներ են ստեղծվում Միխիթարյան միաբանության պատվերով: Այդ մեդալները թողարկվում են Զոնսոն (Միլան), Լորիոլի (Միլան) նշանավոր ֆիրմաներում, իտալացի վարպետների կողմից: Սակայն այս մեդալները խիստ տարբերվում են մյուս հայկական գաղթօջախներում ստեղծված օրինակներից, քանի որ ակնառու է պատվիրատուի անմիջական մասնակցությունը: Նրանք նվիրված են միաբանության հոբելյաններին, երախտավոր հայրերին, դպրոցների ու եկեղեցիների բացմանը, իսկ վերջին տարիներին՝ նաև հայ ժողովրդի պատմության առանձին դեպքերին և նշանավոր դեմքերին: Մեդալների այս վերջին խումբը առավել նշանակալից է, որպես երևույթ հայ մեդալային արվեստի տարածման, նրա դերի և նշանակության իմաստավորման համար: Ստեղծվելով Եվրոպայի կենտրոնում, նրանք հազարավոր օրինակներով տարածվում են աշխարհի տարբեր անկյուններում հանգրվանած հայ ընտանիքներում, որպես Հայաստան երկրի համբավաբերներ:

<sup>1</sup> Տես՝ И. Спасский, «Неизданная медаль Мартина Хольцхейна с армянскими надписями». Сообщения Государственного Эрмитажа. Հատոր XVI, էջ 59—61:

<sup>2</sup> Տես՝ Հ. Սարգսյան, «Երևանյան մեդալներ», «Գիտություն և տեխնիկա», 1968, № 8, էջ 15—22:





Նմուշներ մեդալներից



Խոսել միախառնանքի ստեղծած մեղալների բոլոր օրինակների մասին մեր հողվածի սահմաններում անհնար է, սակայն որոշ օրինակների վրա կանգ կառնենք մանրամասնորեն: Նշանակալից է, որ մեղալների թողարկումը արդեն դարձել է սովորույթ:

Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի՝ 1970 թ. մայիսի 3-ից մինչև հունիսի 20-ը արտասահմանյան ուղևորության արգասիքն է երեք շքեղ մեղալների թողարկումը:

Առաջին մեղալի վրա դրվագված է միաբանության հիմնադիր Մխիթար Աբբահոր դիմաքանդակը, գլխի՝ գոլակ, դեմքով՝ այս: Վերևում՝ շրջագծով գրություն՝ հայերեն և իտալերեն լեզուներով՝ «Մխիթար Աբբահայր. ABATE MECHITAR»:

Պատկերի աջ և ձախ կողմերում՝ «1676—1749»:

Մյուս մեղալի վրա պատկերված է ճ. Ղեվոնդ Ալիշանը գրասեղանի առջև, գրիչը ձեռքին, խորասուզված կարդալիս: Վերևում՝ եզրագծով գրություն՝ «Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ»: Խորհրդանշական է պատից կախված փոքրիկ ժամացույցը: Թվում է, թե ծերունի գիտնականը պայքարի մեջ է մտել անողորմ ժամանակի հետ:

Երրորդ մեղալի առաջին կողմի վրա փորագրված է ս. Ղազար կղզին, սոճիներով շրջապատված շինություններով, որին Ադրիականի խաղաղ մակերեսով մոտենում է գոնդոլը: Վերևում և ներքևում եզրագծով գրված է՝ «Սուրբ Ղազարու կղզի. ISOLA DI S. LAZZARO»: Երեք մեղալների երկրորդ երեսների վրա դրվագված են ութ տողանոց գրություն՝ «ՅԻՇԱՍԱԿ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՆ. Ս. Ս. Ս. Ս. ՎԱԶԳԷՆ Ա.—Վեհափառ կաթողիկոսի Ամենայն Հայոց Մխիթարեան միաբանություն — Վենետիկ — ս. Ղազար. 1970»:

Մեղալային արվեստի ուշագրավ հուշարձաններ են ստեղծվում ԱՄՆ-ի հայկական գաղթօջախում, վերջին երկու տարվա ընթացքում: 1968 թ. Նյու-Յորքում թողարկվեցին հայոց ս. Վարդան Մայր եկեղեցու օծմանը նվիրված մեղալներ: Առաջին կողմի վրա պատկերված են Նյու-Յորքի ս. Վարդան տաճարի հարավ-արևմտյան կողմը: Գմբեթի շուրջը նշմարվում են թեթև ամպի քույակներ: Վերևում՝ շրջագծի եզրով գրություն՝ «Սբ. Վարդան Մայր եկեղեցի հայոց. ՆԻՒ-ԵՈՐԲ. ՆԱԽԱԿԱՏԻՔ. 1968»: Երկրորդ կողմի կենտրոնում գույգ մեղալի-ոնների վրա պատկերված են Վարդան Մամիկոնյանի և Մեսրոպ Մաշտոցի ռելիեֆ կիսադեմ դիմաքանդակները, որոնց տակ գրված է. «Սբ. Վարդան. Սբ. Մեսրոպ»: Ներքևում, Արարատի ֆոնի վրա, պատկերված

է Էջմիածնի Մայր տաճարը: Վերևում՝ Ամենատես Աչք (ս. Երրորդության խորհրդանշը), վրան գրված «Է» (Հայություն=Աստված), որի տակ՝ ներքև սլացող աղավաղ: Մեղալի եզրով մեծադիր տառերով գրված է՝ «Էջ Միածինն Ի Հօրե, Ե՛՛ ԼՈՅՍ-Փառաց Ընդ ՆՄԱ Ե՛՛ Ծագեաց մեզ յոյս Ի Հայաստան աշխարհի»: Ներքևում, ձախից, գրված է մեղալի հեղինակի անվան սկզբնատառերը անգլերեն լեզվով՝ J. H. (Ժան Հովհաննես):

Այս մեղալները պատրաստված են բրոնզից, արծաթից և շատ քիչ օրինակներով՝ նաև ոսկուց: Բացի այդ դրվագվել են նաև օրինակներ անգլերեն գրություններով:

Մեղալի թողարկման գաղափարը երկու կողմերի նախնական գծագրությունները և գրությունները տվել է պրոֆ. Զարեհ Պաուլյանը, իսկ այն մետաղի վրա իրականացրել է քանդակագործ Ժան Հովհաննեսը՝ չափազանց հմուտ և քարեխիղճ:

1969 թ. հայ ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ նշեց հաճախեղ Կոմիտաս վարդապետի ծննդյան հարյուրամյակը: Համաժողովրդական սոցիալիզմի նշանավորվեց նաև մեղալների թողարկմամբ, որոնց մի մասը ստեղծվեց ախյուրքի հայաշատ վայրերում: Առաջիններից մեկը ամերիկահայ գաղթօջախում էր: Մեղալի առաջին երեսի վրա պատկերված է Կոմիտասը՝ դեմքը թեթևակի թեքած ձախ: Ծուրջը՝ եզրով գրություն՝ «Կոմիտաս վարդապետ, ՀԱՌԻՒՐԱՄԵԱԿ ԾԸՆԸՆԴԵԱՆ»: Դիմաքանդակի ձախ և աջ կողմերում՝ հոբելյանական թվականներ՝ 1869—1969: Մեղալի երկրորդ երեսը պատկերում է Արարատյան լեռները, որոնց ստորոտին նշմարվում են հայկական գյուղեր՝ եկեղեցիներով: Գյուղացին գույգ եզներով վարում է հողը: Վերևում՝ երաժշտական գործիքներից կազմված մի խորհրդանշան, որի տակ Կոմիտասի սիրված խմբերգերից մեկի՝ «Առավոտուն քարի յուս»-ի ձայնանիշերի և երգի առաջին երկու տողերը՝

«Առավոտուն քարի յուս

Աստուած պահե՛ ամենուս:

Մեղալի հեղինակն է արձանագործ, ԱՄՆ-ի արդի մեղալային արվեստի նշանավոր նկարիչ-փորագրիչ Հակոբ Հակոբյանը: Նկարիչը հետաքրքիր լուծում է տվել պատկերին: Հենց առաջին հայացքից դիտողի ուշադրությունն ամբողջովին կենտրոնացնում է Կոմիտաս վարդապետի խորաթափանց աչքերի վրա, որոնք թափառում նայում են մի կողմ, և այդ հայացքի մեջ մարդ ա-կամայից պատկերացնում է նրա անցած իմաստալից կյանքի ուղին, մի ուղի, որի նպատակն էր «հայ ժողովրդական երաժշտության գանձերը դուրս քերել հայրենի





Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ Ա. ԿԱՐԳԻ ՇՔԱՆՇԱՆԸ



ՍՐԲԱԿՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼԸ



ավերակներեն»։ Մեղալի հակառակ կողմը լիովին բացահայտում է հայ ազգային երաժշտության հիմնադրի գործունեության, կյանքի իմաստը՝ հայկական հողի ու իրականության ֆոնի վրա։ «Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը. գնացե՛ք և սովորե՛ցե՛ք նրանից»։ Մեղալագործը կարծես առաջնորդվելով Կոմիտասի այս նշանաբանով, կարողացել է խտացրած գույներով փոքրիկ տարածության վրա պատկերել այդ իրողությունը։

Ամերիկահայ գաղթօջախի մեղայները, հակառակ նրան, որ թողարկվել են հայրենիքից հեռու, ամբողջովին ձերբազատված են օտարամուտ տարրերից և ներկայացված են իբրև ազգային ավանդների վարպետորեն միահյուսված ներդաշնակություն։ Չնայած այստեղ ևս ԱՄՆ-ի արդի մեղալային արվեստի ընդհանուր ոճական ազդեցությունը զգացվում է։

Մեղալներ, առնչվող Հայաստանի և հայերի հետ, թողարկվել են նաև Ֆրանսիայում։

Հետաքրքրական է նշել, որ Հայոց Հայրապետի նույն ուղևորության ժամանակ Ֆրանսիական Մոնակո քաղաքում նույնպես թողարկվեց մեղալ՝ ի հիշատակ Վեհափառ Հայրապետի այցելության։ Մեղալի առաջին երեսի վրա պատկերված է ծովափնյա Մոնակո քաղաքի ընդհանուր տեսարանը։ Երկրորդ երեսի վրա, քաղաքի զինանշանի տակ, կա գրություն. «S. S. VASQUEN 1 CATHOLICOS DE TOUS LES ARME- NIENS LE 5 JUIN 1970»։ Մեղալը արծաթյա է, տրամագիծը՝ 70 մմ<sup>3</sup>։

1965 թ. հայ ժողովուրդը նշեց 1915 թ. Մեծ եղեռնի անմեղ զոհերի 50-ամյակը։ Հայ մեղալային արվեստը նույնպես նվիրեց այս տարեթվին օրհնակներ, ինչպես Սովետական Հայաստանում, այնպես էլ սփյուռքում։ Նրանցից մեկը թողարկվեց Իտալիայում, որի առաջին երեսի վրա պատկերված է մահարձան՝ պսակված խաչով, վրան՝ «1915»։ Ծուրջը՝ եզրագծով գրություն. «ՅԻՍՆԱՄԵԱԿ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 1915—1965»։ Երկրորդ երեսի վրա նույն գրությունը կա ֆրանսերեն լեզվով։ Մեղալը բրոնզից է (ոսկեգոծ), տրամագիծը՝ 40 մմ։

Նույն թեմայով, Եղեռնի 50-ամյակին նվիրված, մեղալ թողարկվեց նաև Հաբեշտանի հայոց թեմում։ Մեղալի առաջին կող-

մի վրա պատկերված են երեք ջահեր։ Ծուրջը՝ գրություն՝ «ՅԻՍՆԱՄԵԱԿ. 1915—1965 Աստիս Ապապա»։ Երկրորդ կողմի վրա, ճյուղերի տակ, գրություն՝ «Արդար հատուցում հայ ժողովուրդին. 23 ապրիլ 1965»։

Մեղալի հեղինակն է Բ. Սևաշյանը։ Այն գրված է զարդանախշերի հագեցվածությամբ և պատկերներից, սակայն կատարված է խիստ մոտածված, գրությունները դրվագված են հայկական գեղեցիկ տառերով։ Այն պարզ է, ըմբռնելի և խորհրդանշական։

Անցյալ տարի լրացավ ազգային մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակը, որի առթիվ Լիսաբոնում թողարկվել է մեղալ։ Նկարիչը ինքնօրինակ լուծում է տվել մեղալի ընդհանուր ձևին. այն բաղկացած է զույգ կիսաշրջաններից, որոնք միանում են չորս միջնորմներով՝ կազմելով երեք քառանկյունի պատուհաններ։ Մեղալի վրա պատկերներ չկան։ Առաջին կողմի վրա պորտուգալերեն լեզվով գրված է. «Հարիւրամեայ Յոթեղեան Գալուստ Կիւլպենկեանի. թանգարան, 1969»։ Երկրորդ երեսի ներքևի կիսաշրջանակի վրա՝ «Հիմնադիր Գալուստ Կիւլպենկեան»։

Ծուրջ մեկ տասնամյակ մեղալներ են թողարկվում Սովետական Հայաստանում։ Մեծ թվով մեղալներ դրվագվեցին հատկապես վերջին տարիներում, երբ նշվեցին Երևանի հիմնադրման 2750-ամյակը, Կոմիտաս վարդապետի և Հովհաննես Թումանյանի ծննդյան հարյուրամյակները, Մեծ Հոկտեմբերի 50-ամյա տարեդարձը և այլն։

Սովետահայ նկարիչները ձգտում են տալ արվեստի այս մասնաճյուղին նոր բովանդակություն, ցույց տալ փոքր ծավալային քանդակների վրա մեր իրականության փոփոխությունները, ներկան միահյուսելով անցյալի հետ։

Ծուրջ երկու տասնյակ մեղալներ նվիրվեցին Երևանի 2750-ամյակին։ Նրանցից մեկի վրա պատկերված է Արգիշտի թագավորի դիմաքանդակը խիտ մորոքով, գլխին՝ սաղավարտ՝ ծածկված զարդաքանդակներով։ Երկրորդ կողմի վրա դրվագված է Արգիշտին՝ հաղթական մարտակառքի վրա։ Մեղալի հեղինակն է Մնացական Թամրազյանը։

Նույն հոբելյանին նվիրված մեկ ուրիշ մեղալի առաջին կողմի վրա պատկերված է Հայաստանի Կառավարական տան կենտրոնական մասը և առասպելական թևավոր էակ։ Ծուրջը եզրագծով հալերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով գրված է՝ «Երևան»։ Երկրորդ կողմի վրա պատկերված է հավերժության նշան և կա գրություն. «Էրեբունի հիմնադրման 2750-ամյակի առթիվ»։

<sup>3</sup> Օգտվելով առիթից, մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին այն բանի համար, որ Նա ուսումնասիրության համար տրամադրեց մեզ սույն մեղալը, որը սահմանում է Մայր Աթոռի թանգարանում, և այն աջակցության համար, որ ցուցաբերում է մեր աշխատանքի նկատմամբ։



Մեղալի հեղինակն է անվանի քանդակագործ Արա Սարգսյանը:

Լենինական քաղաքը իր պատվավոր հյուրերին պարգևատրելու համար թողարկել է հուշամեդալ: Առաջին կողմում, Արագածի և ծագող արևի ֆոնի վրա, պատկերված են Լենինի արձանը, քաղաքային խորհրդի շենքը, բարձրաբերձ կոունկ և հավերժական կրակ: Վերևում շրջագծով կա գրություն՝ «Լենինական»: Երկրորդ կողմի վրա պատկերված է Գյումրիի հին բերդը, ս. Փրկիչ եկեղեցին, Անիի քաղաքային զինանշանը, եզրափակված տերևազարդերով:

Վերջերս նշվեց հայ թատրոնի 2000 տարին, որը ուշացումով հավերժացվեց հաս մեղալի թողարկմամբ: Առաջին երեսի վրա պատկերված է Արտավազդ 2-րդը, ըստ Արա Սարգսյանի ստեղծած քանդակի: Չախից՝ եզրով գրություն՝ «Արտավազդ Բ»: Երկրորդ կողմի վրա՝ Երևանի օպերայի և բալետի շենքը: Չախից՝ եզրով գրություն՝ «Հայ թատրոնի 2000-ամյակին»: Մեղալի հեղինակն է Ա. Սարգսյանը:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրվեցին մեդալներ: Նրանցից մեկի հեղինակն է ճարտարապետ Ստեփան Բուրբալյանը: Առաջին կողմի վրա պատկերված է Թումանյանի գլուխը: Երկրորդ երեսի վրա փորագրված է մեծ գրողի ստեղծագործությունների թեմաներով ընդհանրական պատկեր: Աջքի է բնկնում Հ. Թումանյանի դիմաքանդակը: Հեղինակը կարողացել է ստեղծել ժպտալեմ, ջերմ, ամբողջական կերպար:

Մեդալներ են թողարկվում հաս Էջմիածնի Մայր Աթոռի նախաձեռնությամբ: Ս. Գրիգոր Լուսավորչի անունով շքանշանը հաստատվում է Գևորգ Ե կաթողիկոսի օրով: 1956 թ., Վազգեն Վեհափառ Հայրապետի օրով, այդ շքանշանը որոշ ձևափոխման է ենթարկվում, ինչպես այդ ցույց է տալիս լուսանկարը: Այս շքանշանով պարգևատրվում են հայ եկեղեցուն և հայ ժողովրդին մատուցած անշահահնդիր ծառայությունների, նվիրաբերական վերաբերմունքի համար՝ անձամբ ընդունելով այն Ամենայն Հայոց Հայրապետի ձեռքից: Շքանշանը ոսկյա է, ընդելուզված տասներեք փոքրիկ աղամանդներով: Դափնե և կաղնու ճյուղերից կազմված պսակի միջև տեղադրված են կաթողիկոսական աստիճանի նշանները՝ գավազան, խաչ և խուր (թագ), որոնք միացվում են կապույտ արծնապատ ժապավենով, վրան գրված Հայոց Հայրապետի անվան սկզբնատառերը՝ «Վ. Ա.», կենտրոնում՝ կարմիր արծնապատ թիթեղի վրա հինգ աղամանդներից կազմված խաչ: Ներքևում՝ թևատարած աղավնի՝ անմեղության ու մաքրության խորհրդանշանը,

որի տակ՝ թվականը՝ ՌՆԵ (1956 թ.): Շքանշանի այս նոր տարբերակը պատրաստվել է 1956 թ. կաթողիկոս Վազգեն Ա-ի կարգադրությամբ: Նկարիչը ոսկու և աղամանդների, կարմիր ու կապույտ արծնապատ երանգավորումների, նրբին փորագրությունների ընդհանուր ներդաշնակությամբ շքանշանին տվել է գեղեցիկ տեսք և դրանով իսկ արտահայտել վեհության զգացում: Շքանշանը պատրաստվել է մասնավոր արհեստանոցում, ոսկերչի ձեռքով, և հանդիսանում է հայ բազմադարյան ոսկերչական արվեստի լավագույն ավանդների շարունակությունը:


Էջմիածնի Մայր Աթոռի համար նշանավոր տարեթիվ էր 1969 թվականը. հոկտեմբերի 5-ին կայացավ սրբալույս մեռոնի հանդիսավոր օրհնությունը: Այդ առթիվ թողարկվեցին արծաթյա և պղնձյա մեդալներ, որոնք հավերժացրին եկեղեցական այդ մեծ հանդիսության պատմական ու հոգևոր նշանակությունը: Մեղալի առաջին երեսի վրա պատկերված է Էջմիածնի Մայր տաճարի ընդհանուր տեսքը, որի տակ՝ հավերժության նշան: Եզրով՝ կիսաշրջանաձև գրություն՝ մի տող Մայր Աթոռի հիմն-շարականից՝ «ԷԶՄԻԱԾԻՆ Ի ՀՕՐԷ ԵՒ ԼՈՅՍ ՓԱՌԱՑ ԸՆԴ ՆՍԱ»: Երկրորդ երեսի վրա փորագրված է ս. մեռոն օրհնելու մեծ կաթսան՝ ծածկված նորը գարդաբանդակներով և եկեղեցական խորհրդանշական պատկերներով, որի տակ՝ թվականը՝ ՌՆԺԸ (1969): Ներքևում, եզրով, կիսաշրջանաձև գրություն՝ «ՕՐՀՆՈՒԹԻՆ ՍՐԲԱՎՈՅՍ ՄԻԻՌՈՆԻ»:

1969 թվականի մեռոնօրհնության ծիսակատարությանը, որի պատմությունը ընդգրկում է շուրջ տասնյոթ դար, նվիրված մեղալի դրվագումը սկիզբ կդնի այսուհետև հայ եկեղեցու աչքի ընկնող իրադարձությունները նշանավորող մեդալների թողարկմամբ: Հուսանք, որ այս գեղեցիկ նորամուծությունը կդառնա ավանդություն՝ նոր էջ բացելով հայ մեդալային արվեստի պատմության մեջ:

Սովետահայ նկարիչները ձգտում են մեղալների վրա օգտագործել ավանդականը, դարերի խորքից եկած և դարերով մշակված գաղափարների նմուշները, հաճախ և պատկերատիպերը, հաղորդելով նրանց նոր բովանդակություն: Ինչ խոսք, որ բոլոր օրհնակները կատարույ չեն: Սակայն ամ, ինչ որ արդեն ստեղծվել է, հետանկարալին է:

Մեդալները ունեն հայագիտական և պատմա-գեղարվեստական նշանակություն: Միևնույն վերջին ժամանակներս այս հուշարձանների վրա պատշաճ ուշադրություն չի դարձվել: Հաստատ շատ մեռուներ, ստեղծված մասնավոր արհեստանոցներում, եղա-





Նմուշներ մեդալներից

Կի օրինակներով պահվում են իբրև ընտանեկան մասունքներ, շատերը անվերադարձ կորել են: Ահա թե ինչու այս կարգի ար-

ժեքների կենտրոնացումը Հայաստանի պատմության թանգարանում անհետաձգելի անհրաժեշտություն է: